

ՈԳԵԼԻՑ ՀՄՊԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ*)

5. Բազմաթիւ է սակաւարիւնութիւնը, մանաւանդ, կանանց մօտ, որի պատճառը սնունդի պակասութիւնը և յաճախ կիսաքաղցածութիւնն է, որովհետև, ինչպէս վերև յիշեցինք, մեր գիւղացու խոշոր մասն, մանաւանդ լեռնային շրջաններում, կիսաքաղցած է (ուղղողական): Շնորհիւ դրան ազգաբնակութիւնը չի կարող դիմանալ փոքր ի շատէ ծանր հիւանդութիւնների, մանաւանդ տարափոխիկ, ուստի և մահացութեան ահազին տոկոս է լինում: Մեր գիւղացին այդ շրջաններում ապրում է գլխաւորապէս լաւ կիմայի շնորհիւ, այլապէս եթէ նա ապրէր հիւանդոտ, վատ կլիմաներում՝ իւր ներկայ առողջապահական պայմաններով, նա ևս մահմեղականների և սակաւաթիւ հայ գիւղերի նման, որոնք ապրում են տափարակներում, պիտի ոչ թէ աճէր, այլ պակսէր, տալով աճման շատ չնչին տոկոս:

6. Կանանց հիւանդութիւնները ևս կազմում են մեծ տոկոս. դա հասկանալի է, և բացատրելի վաղաժամ ամուսնութեամբ, որը դժբաղտաբար տեղի է ունենում և այժմ, ինչպէս յիշուեց վերև և կանոնաւոր բժշկութեան կատարեալ բացակայութեամբ: Մեր գիւղացիք շնորհիւ ամօթխածութեան շատ սակաւ են դիմում կանանց հիւանդութեան առթիւ. և որդեծնութեան ժամանակ բժշկին: Նրանց բժիշկները տատմայեներն են, իսկ ծննդաբերութեան ժամանակ դիմում են խաշնարածներին, որոնք փորձուած լինելով անասունների վրայ՝ յաճախ ակուշեօր և խիրուրգի պաշտօն են կատարում, զործածելով երբեմն սուր գործիք, դանակ և այլն**): Բայց թէ ինչքան օգտակար կարող են լինել նրանք, այդ թողնում ենք բոլորիս երեակայութեան:

Ակամայ մարդ մտաբերում է, թէ ինչ մեծ և բարերար գործ կարող էին անել, եթէ հայ կինը ունենար իւր մօտ, թէ բժիշկներ և թէ մանկաբարձուիներ, տեղական լեզուին ծանօթ:

Բժ. Ղելմանիդ իւր նորագոյն աշխատութեան մէջ***)

*) Տես Արարատ, 4943. յունուար:

**) Նոյնը անում են եւ Կախեթիայում, ինչպէս զբել է բժ. Ախաբերդեան իր նորագոյն գրուածքում, որի մասին յիշեցինք վերեւ:

***) Դր. Գելման. Женская болезни и общественные меры борьбы съ ними. Москва 1912 г.

ջարկում է առանձին ուշադրութիւն դարձնել կանանց առողջական դրութեան վերայ, որովհետև «Փիզիքական առողջացումը ազգաբնակութեան» ժամանակակից ամենակարևոր խնդիրներից մէկն է. դեռ հին ժամանակներում Յունաստանի հոչակաւոր օրէնսդէտ Լիկուրդս ասել է՝ «Կնոջ ծաղկեալ մարմնի մէջ թագնւում ևն ազգի զօրութիւնները»: Եւ կանանց առողջութեան հարցում հեղինակը շատ մեծ նշանակութիւն է տալիս կին բժիշկներին, առողջապահութեան տարածման, մանկաբարձուհիների բազմացման և այլն, որովհետև ըստ հեղինակի՝ ներկայում 98% ծննդաբերութիւնը հասարակ տատմերների ձեռքով է լինում:

7. Զերմախտը մեր երկրի շատ տեղերում հիւանդութիւնների մէջ առաջի տեղն է բռնում, որը ամենասարսափելի տարիքն է համարվում: Մենք գիտենք տափարակ տեղերի շատ գիւղեր, որոնց բնակիչները ոչ միայն չեն աճում, այլ ընդհակառակը պակասում են. ասել է թէ սերհատում են. (ՎԱՅՐԱՅՈՒՅԹ) օրինակ «Կրզէն» դիւղը Ղաղախի գաւառում, երբ երբեմն մի քանի հարիւր տնից բաղկացած, այժմ հազիւ 30 տուն ունի. նա գանուում է կուր գետի ափին շրջապատուած մահմեղականներով և այդ պատճառով հայ-թրք. ընդհարման ժամանակ նրա բնակիչները փախանգիխաւորապէս՝ թիֆլիս: Իմ յորդորներս բնակիչներին, թողնել այդ դիւղը, պատասխանում էին. «Ռէւր գնանք, հողերնիս մեծ է, պտղաբեր, ափսոսում ենք զրկուել նրանից»: Պէտք է աւելացրած, որ սորանք նստակիաց են, իսկ հարիւր թուրքերը ամառները բարձրանում են սարերը: Բժիշկ Արտազեանին, իր հետաքրքիր աշխատութեան մէջ*) գրում է, որ Կախինթիայի ազգաբնակութեան գլխաւոր չարիքը կազմում է զերմախտը, որ տալիս է 59% բոլոր հիւանդութիւնների: Կան բազմաթիւ գիւղեր Ալազանի հովտում, որոնց բնակիչները սերհատել են (ՎԱՅՐԱՅՈՒՅԹ) Ալազան գիւղի մօտ 120 տուն ուու գաղթականներից երեք տարուայ ընթացքում մնացել են 24 տուն, դրանք ևս փախել են ուրիշ տեղ:

Ցարզոյ բժիշկը բերում է բազմաթիւ գիւղեր վրացի ազգաբնակութեամբ, որոնք նոյնպէս սերհատվում են (ՎԱՅՐԱՅՈՒՅԹ) մալարիայից: Մալարիան վտանգաւոր է մանաւանդ երեխանների համար, որոնք մանանում են մեծ թուով, նոյնպէս տգէտ և աղքատ ժողովրդի համար, որը չգիտէ ապրել, կանոնաւոր կերպով, իր ժամանակին չի դիմում բժշկական օգնութեան և չի ընդունում փրկարար խինինը: Վերջինի շնորհիւ Աֆրիկայի շատ գաղութներում եւրոպացիք կարողանում են ազա-

*) Медико топографическое описание Кахетии, Труды Кавк.-Мед О-ва Октябрь 1909 г., январь 1910 г.

տուել մայարիայի վտանգից, ինչպէս ապացուցել է հոչակաւոր գիտնական Կօխը, որը առաջարկում է խինինի առատ գործածութիւն*): Եթէ առհասարակ տափարակների ազգաբնակութիւնը համեմատաբար յեռաբնակների շատ սակաւ է աճում, գլխաւոր սպատճառը մալարիան է և նրա կցորդ բազմազան հիւանգութիւնները, օրինակ, փորլուծութիւն, ջրգողաւթիւն, ուժասպառութիւն և անդիմացկանութիւն, զանազան սուր և տարափոխիկ հիւանգութիւններ, որոնց աւելի մեծ զոհ են տալիս քան լեռնային վայրերում ապրող ազգաբնակութիւնը, ինչպէս այդ քանիցս դիտել ենք: Կրկնում ենք արմատական միջոցը համարւում է խինինը, որի գործադրութիւնը, թէ հիւանդի և թէ առողջների համար, իբրև նախապաշտպանողական միջոց է համարւում՝ ներկայումս կոչւում է «խինինիզացիա» (ХИНИНІЗАЦІЯ): Երբ մեր մալարիոս վայրերի ազգաբնակութիւնը գիտակցէ այդ փրկարար միջոցի կարևորութիւնը շատ ու շատ կարիքներից ազատուած կլինի՝ շատ թիշ նիւթական ծախս ունենալով, համեմատած նորան, որը հասցնում է նորան մալարիան՝ քայլացելով նորան՝ թէ նիւթականապէս և թէ փիզիքապէս յաճախ մահ պատճառելով, մանաւանդ որ ջերմախտը պատահում է ամառուայ ժամանակները, երբ գիւղացին պիտի աշխատէ իւր ապրուստը ապահովելու և այլն:

Խինինի գիւտը այնքան հետաքրքիր է, որ այստեղ միջանցկեալ մէկ քանի խօսք աւելորդ չի լինի ասել նորա մասին: Խինինը պատրաստում է Պերուի (Պերչ) անտառներում բուսնող ծառնի կեղեկց, և այդ բանը տեղացիները ծածուկ էին պահում, սպառնալով մահ նորան, ով ոք յայտնէ հկւորներին-եւրոպացոց: Պերուի մայրաքաղաքում Լիմում հիւանդանում է 1638 տ. Իսպանական փոխարքայի կինը ղքսուհի del Chiaéchon սաստիկ գողերոցով: Իմանալով այդ բանը Canizar դատաւորը՝ ուղարկում է խինինի կեղեղը (Կօրչը), որի գօրութեան մասին իմացել է տեղացիներից: Հիւանդին բժիշկ ծե Vega համաձայնում է տալ այդ դեղը. և գըքսուհին առողջանում է: Վերջինը վերադառնալով Իսպանիա այդ դեղը տարածում է ժողովրդի մէջ, որը կոչւում էր pulvis Comitissa (դքսուհ, փոշի): Ահա նորա անունով կոչւում է այդ կեղեղը: Շատ շուտով տարածում է այդ դեղի բռժական գօրութիւնը, մանաւանդ իրը Լիւդովիկ XIV ազատում է նորա շնորհիւ մալարիայից: Բայց այն խինին աղը-խինինը՝ գտել են Pelletier և Cavonton 1820 տ, և այժմ Պարիզում կանգնած է նրանց արձանը, իբրև նշանաւոր գիւտ անողների: Զկայ բժշկականութեան մէջ մի այնպիսի դեղ,

*) Դրա մասին մենք ունինք մի առանձին յօդուած, որը տպուել է «Բժիշկ» № 44—1912 տ.

որը իւր օդտաւէտութեամբ գերազանցի նորան, որովհետև նա է ամենասարսափելի մալարիայի դէմ ճշմարիտ միջոցը. կարելի է ասել, որ բոլոր ճանապարհորդների կէսը Աֆրիկայում, զոհ էր գնում մալարիային: Եթէ եւրոպացիք կարողանում էին տաք երկրներում գաղութներ ունենալ և այնտեղ ապրել, դա չնորհիւ խինինի է: Հոչակաւոր Կօխի հետազօտութիւնները ապացուցել են այդ հրաշագործութիւնը, գտնելով, որ խինինը բուժիչ և նախապաշտպանիչ զօրութիւն ունի մալարիայի դէմ, որովհետև նա է, որ սպանում է մեր արեան մէջ մալարիայի պարագիտին կենդանական ծագումից:

Հոչակաւոր Կօխը գտնում է, որ եթէ մալարիոտ տեղերում ընդունել 9—10 օրը մի անգամ մէկ— $1\frac{1}{2}$ գրամ խինին՝ կարելի է ազատ լինել հիւանդանալուց: Եթէ մալարիայի տարածող մոծակը ոչնչացնել կամ նորա խայթոցից խուսափել զանազան միջոցներով՝ լուսամուտները, դռները ցանցերով պատել, նոյնպէս ձեռքերը, երեսը, ինչպէս առաջարկում են յայտնի գիտնական մասնագէտ պրօֆ. հնարաւոր է ազատուել մալարիայից: Այժմ հակամալարիուկան միջոցները այնքան մեծ կարևորութիւն են ստացել, որ կառավարութիւնները առանձին ուշադրութիւն են դարձնում, իտալական կառավարութիւնը 1906 թ. արժան գնով ծախել է աղդաբնակութեան 18,000 կիլոգրամ խինին (կիլոգ. $2\frac{1}{2}$ գրվանքայի է հաւասար): Իտալական կառավարութիւնը, չնորհիւ դորա հոչակաւոր մասնագէտ պրօֆ. մալարիայի վերաբերմամբ՝ ընդունել է 1900 թ., որ տէրութիւնը ինքը ծախէ խինինը, աղքատներին ձրետայ. և ահա հետեւանքը՝

189—92 տ. տ. իտալիայում, վախճանւում էր մէկ միլիոն աղգարնակութիւնից 541 մարդ

Խսկ 1908—10 տ. միայն 101 մարդ.

Հոչակաւոր պրօֆ. Celli առաջարկում է՝ օրական ընդունել խինին 3—6 գր. ($0,2—0,4$). կամ երկու օրը 0,6 (10 գրամ). ծայրայեղ դէպքերում շաբաթը մէկ անգամ 1 գրամ (16 գրամ):

Խսկ խինինը տէրութիւնը ծախում է շատ էժան՝ մէկ ֆրանկին 8 դրամ*):

Վեներական ախտերը թէկ այնքան դեռ չեն տարածուած հայդիւղական աղգարնակութեան մէջ, ինչպէս Ռուսաստանում, ուր մէկ քանի գիւղերում աղգարնակութեան 95% -ը վարակուած է այդ ախտով: Ռուսաստանում ներկայումս հաշւում է 5 միլիոն

*) О борьбѣ съ маларіей въ Италіи докт. Столбниковъ. Труды Кавк. медиц. общ. янв.—апр. 1914 г.

սիֆլիտիկներ, այսինքն $3-40/0$ ամբողջ ազգաբնակութեան*)։ Բայց վերջերս այդ ախտը մտել է և հայ գիւղը, շնորհիւ զինւորագրութեան, քաղաքներ կամ օտարութիւն գնացող վաճառականների, բազմաթիւ մշակների և այլն, որոնք քաղաքներում վարակուած լինելով գալիս են գիւղը, ուր տարածման համար ամենայաջող պայմանները կան։ Եթէ օր առաջ կարևոր միջոցներ չը ձեռնարկուեն այդ ախտի դէմ, նա կստանայ մեծ ծաւալ և կը քայքայի մեր տգէտ և ազգատ ազգաբնակութեան, մի խօսքով նա կստանայ համաճարակի բնաւորութիւն, ինչ որ տեղի էր ունեցել Ղարսի շրջանի 12 հայ գիւղերում, որոնց մասին գրել էի բժ. Ղազագեանի խօսքերով 1911 թ. Մշակ-ի № 254-ում բժ. Ա. Բարայեանի «Եկեղեցական առողջաբանութիւն» գրքի առթիւ գրախօսութեան մէջ։

Ցաւօք սրտի պիտի ասեմ, որ մենք նորերս իմացանք, որ մի քանի հայ գիւղերում կան ընտանիքներ՝ վարակուած սիֆլիտով, որի դէմ հարկաւոր միջոցներ չեն ձեռնարկուած, շնորհիւ տգիտութեան և բժշկական օգնութեան բացակայութեան**։

9. Թոքախտը կամ բարակացաւը, չնայած հայ գիւղերի լաւ կլիմայական պայմաններին, սակաւ չէ, գիւղական ազգաբնակութեան մէջ, մանաւանդ կանանց սեռի։ Գլխաւոր պատճառը պէտք է որոնել հակաառողջապահական պայմանների մէջ, մանաւանդ բնակարանների, խորին տգիտութեան, անբաւարար սնունդի և միմեանցից վարակման։

Հայ գիւղացու վատթար սովորութիւնը՝ թքել յատակի վրայ, հիւանդի խորխը ընդունել կեղտոտ թաշկինակների վրայ, թէ պահողի և թէ նրա ծնողների մօտ սովորական երևոյթ է։ Հիւանդների հագուստը մեռնելու դէպլքում առանց հիմնաւոր ախտահանման տալիս են ուրիշին, իսկ նրա անկողինը՝ որը շաղախուած է լինուած հիւանդի խորխով, մէզով, կղկղանքով, քրտինքով, հիմնական ախտահանութեան չէ ենթարկւուած։ Շատ ճիշտ է նկարագրել յարգոյ Ա. Քալանթարը իւր զեկուցման մէջ՝ «Գիւղը և թոքախտը»**։

Պէտք է ասել, որ գիւղացին համարեա թոքախտը վարակիչ չէ համարում, նա բոլորը բացատրում է ժառանգականութեամբ,

*) Վրաչեն. գազետա, № 13, 1913 թ.

**) Նորերս Հորիզոն լրագրում զրած է, որ Նուխուայ զաւաւի մէկ գիւղում, մի գիւղացի վարակուած լինելով սիֆլիտով, իրան կախել է Աւրախութեամբ պիտի ասենք, որ այժմ զաւառներից զալիս են Երիխոի 606-ի միջոցով՝ բժշկուելու։

***) Գիւղը եւ Թոքախտը. Մշակ № 82 42 ապր. 1914 թ.

տեսնելով երբեմն այդ հիւանդութեան հարուածը ղանազան ընտանիքներում, որոնցից շատերը զո՞ն են գնում վերջինին։ Մեր դիտողութիւնից այն կարող ենք յիշատակել, որ թոքախտը այն վայրերում աւելի է լինում, որոնք տուժում են ջերմախտից, ուր ազգաբնակութիւնը լինում է նիհար, սակաւարիւն, թուլակազմ, նոյնը լինում են կանանց մօտ, որոնք վաղաժամ ամուսնանալով մնում են թոյլ, յաճախ զաւակածնութիւնից ենթակայ՝ թէ կանանց և թէ ուրիշ հիւանդութիւնների կամ կավկազում տարուայ մահացութիւնը թոքախտից հաշւում է 20,000, իսկ միակ ծփխիսում՝ 500 զո՞ն ամեն տարի։

10. Աչքերի հիւանդութիւնները մեծ տեղ են բռնում մեր գիւղական ազգաբնակութեան մէջ։ Մեզ մօտ չկայ վիճակագրական տեղեկութիւններ այդ հիւանդութեան մասին, բայց անհերքելի փաստ է, որ յիշեալ հիւանդութիւնը շատ տարածուած է։

Բաւական է յիշել, որ մեր գիւղական ազգաբնակութեան մէջ կոյրերի թիւը բաւական շատ է։ Կոյրերի վիճակագրութիւնը, ինչպէս ապացուցել են յայտնի ակնաբոյժները, ունի իր որոշ գործակիցը (բաժնութեան) 25:10,000 այն ազգաբնակութեան մօտ, որ չկայ բոլորովին սանիտարական կազմակերպութիւն։ Վերջինի անբաւարարութեան ժամանակ 15:10,000, բաւարար պայմաններում՝ 10:10,000, բարեյաջող սանիտար պայմաններում, 6:10,000։ Այնուամենայնիւ ինչքան էլ սանիտարական և կուլտուրական պայմանները կատարեալ լինին, անխուսափելի է հետեւեալ կօէֆիցիենտը՝ 3:10,000։ Բայտ յայտնի ակնաբոյժ պրօֆ. Գօլովինի, Ռուսաստանում այդ ցուցիչը (բաժն.) 20 է։ Ամերիկայում, 8,9։ Ռուսաստանի ազգերին վերաբերեալ ահա ինչ է նկատվում։

Վողիակների մօտ՝ կուրութեան ցուցիչը—83 (83:10,000)

Թաթարների	»	»	»	51	»
Հրէաների	»	»	»	10	»
Լէհերի	»	»	»	8	»
Գերմանացիների	»	»	»	7	»

Գալով կուրութեան պատճառներին, Ռուսաստանում, տեսնում ենք հետեւեալը։ տրախօման տակիս է 100/0, ծաղիկը 120/0, իսկ եւրոպայում 1,20/0 ոչ աւելի։ Ռուսաստանում հաշւում են 300,000 կոյրեր, որոնցից 180,000 կուրացել են բժշկական օգնութեան բացակայութեան պատճառով, որովհետեւ այստեղ 500,000 բնակչութեան հազիւ մէկ ակնաբոյժ է ընկնում*։

*) Առողջապահութեան կարեւորութիւնը բժ. Աղասարեան, Առողջապահ № 6 1944 թ.

Պրօֆ. ակնաբոյժ Գոլովինի վիճակագրութեան մէջ չեն յիշուած կուրութեան այլ պատճառները, մանաւանդ նորածինների աչքերի բորբոքումը (blenorrgkaosca neonatorum), որի պատճառը մօր սեռական գործարանի թարախային հոսանք (օնկա) և սուսանակն են, երբ երեխան անցնելով նորա հեշտոցով (влагалище), թարախը ընկնում է նրա աչքերի մէջ: Ինչպէս զբում է յայտնի ակնաբոյժ Fuchs իւր նշանաւոր դասագրքի մէջ*) Գիրմանական և աւատրիական կոյրերի համար՝ հիմնարկութիւններում վերոյիշեալ ձեռվ և պատճառներով կուրացածները կազմում են $\frac{1}{3}$ -ը բոլոր կոյրերի: Անտարակոյս՝ բոլոր կոյրերի $100/0$ -ից աւելի կազմում են նրանք, որոնք կուրացել են ծննդեան ժամանակ սուսանակի կամ այլ թարախի նրանց աչքերն ընկնելուց:

Բաւարիայում 1900 թ. բոլոր կոյրերի համար հիմնարկութիւններում $43^0/0$ -ը վերոյիշեալ հիւանդութիւնից է պատճակ:

Գիրմանիայում նոյնանման հիմնարկութիւններում՝ 3309 կոյրերից՝ 410 -ը ($12,390/0$) միենոյն պատճառից է եղել: Միակ յուսակի միջոցը երծաթաղի (լապիս) $10/0$ լուծուածքն է, որ առաջարկել է Լէյպիցիդի պրօֆ. Créde, որը յիշեալ քաղաքի ծննդաբերական հիւանդանոցներում հաշուել է միջին թուով $16,80/0$ նորածնի աչքերի բորբոքում. բայց՝ մտցնելով իւր միջոցը, յիշեալ տոկոսը իջել է $0,1-0,20/0$ -ի:

Յայտնի ակնաբոյժ Ռէյխը (Reich) 1884 թ. Տփիսիսի քաղաքային ամբուլատորիայում դիտել է, որ բոլոր կոյրերի $270/0$ -ը կուրացել են աչքի սուսանակային բորբոքումից: Բոլոր մամագէտ ակնաբոյժները առաջարկում են դժոխաքարի (argent, nitrium) լուծուած $10/0-20/0$, որը երեխայի ծնուելուց իսկոյն պիտի կաթեցնել աչքի մէջ, եթէ կասկած կայ, որ նա վարակուել է մօր սեռական գործարանով անցնելիս: Վերջերս բժ. Վէյդենբաումը առաջարկում է այդ երծաթային աղը պատրաստել բլիթի նման (լըպեշկա) բորակաղի ճետ (սելիգրա) հաւասար չափով $0,1-0,5$: $10,0$ թորացրած ջրի մէջ լուծելով, որովհետեւ այդ ձեռվ չի փչանում յիշեալ գեղը: Հարկաւոր է ունենալ միայն թորած ջուր— ճամանակաց աղը**).

Որովհետեւ երեխայի աչքերը կարող են բորբոքուել՝ թէ սուսանակային և թէ աւելի անմեղ թարախից, հեշտոցից հոսող, որը կոչւում է սպիտակ հոսանք (օնկա), այդ վերջինը աւելի անվտանգ

*) Проф. Fuchs, глазн. болѣзни 1897. перев. съ пѣмѣцкаго.

**) Примѣненіе лѣпешекъ отъ ляписа для предупрежденія бленпорея глазъ у новорожденныхъ. Dr. Вейденбаумъ. Врачебно-гигиена № 6. 1913 г.

է, քան առաջինը. հարկաւոր է, որ երեխածնութեան ժամանակ ծննդկանի սեռական օրգանը — հեշտոցը (влагалище) լուանալ էս-մարխի գործիքով (кружка թемарх) ախտահանիչ լուծուածքով (Բօրնի հիպերմարդ. kalitvalihyperme և այլն), որպէս զի երեխան ծնուելիս նորա աչքերը չվարակուին՝ թարախ ընկնելուց: Պիտի զգուշանալ, որ թարախը սեռական գործարանից ձեռքով չի ընկնի աչքերը թէ մեծերին և թէ փոքրերին: Մանաւանդ պիտի զգոյշ լինեն նրանք, որոնք ունին սուսանակ կամ թարախային հոսանք անդամից կամ կողջ հեշտոցից: Այդ բանը պէտք է իմանան թէ այր մարդիկ և թէ կանայք, թէ ծնողներ և թէ երախայոց պահող ծառաները, աղախինները:

Տրախօմա. Այս սարսափելի և վարակիչ հիւանդութեան պատճառը դեռ յայտնի չէ. նա տարածւում է գլխաւորապէս փակ հիմնարկութիւններում, կազարմաններում, բանտերում, փակ դըպրոցներում և վերջապէս աղքատ և հակասանիտարական բնակարաններում, ուր փոշին, կեղտը և ծուխը անպակաս են լինում, օրինակ հրէանների և ֆինլանդացիների մօտ:

Համաձայն Հելսինգֆորսի պրոֆ. Beccer-ի հետազօտութեան, ֆինլանդացոց մօտ կուրութիւնը մեծ տոկոս է կազմում. 1865 թ. 1802248 ազգաբնակութեան մէջ կոյսեր եղել են 5187, կիսակոյցեր 5187, որոնք չէին կարողանում կարդալ խոշոր շրիփտով տպուածը: Միջին թուով 140 բնակչին գալիս է մէկ կոյր: Գլխաւոր պատճառը տրախօման է, որը համարեա ամեն ընտանիքում կարելի է գտնել, և դա բացատրւում է նրանով, որ ֆինլանդացոց զբաղմունքը փոշու, ծխի և կեղտոտ խրճիթներում է լինում, օրինակ, հացահատիկների չորացման տեղերում (ցյալլեայ) մինչև աղալը, պարարտանիւթի պատրաստելը, տօրֆի և փայտի այրելուց, մոխիր ստանալու համար: Խրճիթները իւր փակ լուսամուտներով, խիտ բնակչութեամբ, նոյնպէս յաջող հող են պատրաստում տրախօմայի զարգացման և տարածման համար: Գլխաւոր միջոցը, յիշեալ պրոֆ. համարում է դպրոցների միջոցով առողջապահական գիտելիքների լայն տարածումը և բժիշկների աւելացումը:

Մենք դիտմամբ այսքան երկար կանգ առանք աչքի հիւանդութիւնների վրայ, որովհետեւ հայ գիւղացիների պայմանները բաւական նման են ֆինլանդացիներին. փոշի, ծուխ, կեղտ և բժիշկների սակաւութիւն: Մեզ մօտ կուրութեան գլխաւոր պատճառը ծաղիկն է, մասամբ միւս վարակիչ հիւանդութիւնները, քութէ և լութէ ալն: Ծաղկի վտանգը կարելի է նեռացնել, եթէ բաւարար կերպով ծաղկի նախապաշտպանողական պատուաստ լինէր, որը դժբախտաբար շատ քիչ է գործադրւում մեր մէջ:

Տրախոսմա կոչուող հիւանդութիւնը (trachoma նշանակում է՝ շերօխօվածություն, աչքի լորձաթաղանթի խորտուրորտութիւն) մեզ մօտ բաւական տարածուած է, մանաւանդ տաք տափաստաններում, Երևանի նահանգում և լին: Մեզ պատահել է Գանձակի նահանգում տեսնել ամբողջ ընտանիքներ վարակուած այդ ախտով, մանաւանդ թուրքերի մօտ: Մեզ մօտ չկայ ճիշտ վիճակագրութիւն, բայց՝ ի նկատի ունենալով մեր գիւղական ազգաբնակութեան հակաառողջապահական կեանքի պայմանները՝ փոշի, ծուխ, կեղտ, վատ բնակարաններ և լին, դժուար չէ ենթադրել, որ տրախոման շատ տարածուած պէտք է լինի:

Գալով սուսանակից կամ սեռական գործարանի թարախային-հոսումից տեղի ունեցող աչքացաւի, նա ևս պիտի տարածուի, քանի որ տարածւում են վեներական ախտերը՝ սիֆլիսը և սուսանակը՝ զինուորական ծառայութիւնից յետ դարձողների, քաղաքները երթևեկող մշակների և առևտրականների միջոցով, որոնք՝ վարակուելով ուրիշ տեղերում, իրանց տգիտութեան և անփութութեան շնորհիւ տարածում են այդ ախտը և՝ գիւղերում:

Ի՞նչ կարելի է անել վերոյիշեալ վտանգաւոր աչքերի հիւանդութիւնների դէմ: տարածել առողջապահական գիտելիքներ դըպ-րոցների միջոցով, ինչպէս առաջարկում է պրօֆ. Beccer-ը և ունենալ գիւղերում մանկաբարձուհիներ, որոնք թէ ծննդաբերութեան, թէ նորածինների աչքերի հիւանդացման դէպքերում և թէ ծաղկի-պատուաստի գործում, ահագին օգուտ կարող են տալ մեր խեղճու տգէտ հայ գիւղացիութեան, մանաւանդ կանանց սեռին: Անտարակոյս ամենից գլխաւորը լուսաւորութեան լայն տարածումը և բժշկական մարմնի զօրեղացումը կլինէր և ի միջի այլոց ակնարոյժերի, բայց դա շատ հեռու ապագայի հարց է, որը կարող է լուծուել, երբ կմտցուի զեմսւու:

բժ. Բ. Աղասարեան

